

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2020-3-3-Ա

ք. Երևան

22.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 22-ի նիստում քննարկեց 2020 թվականի մարտի 17-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ ՍԱՅԱ Քոնսալթինգ ընդ Թրեյդ ԼԹԴ ընկերության (22 Northumberland Road, Ballsbridge, Dublin 4 Ireland, IE) բողոքը «KARASI ARENI NOIR ZORAH» (No20191117) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 33-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «KARAS» («Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ, ք. Երևան, Մ. Խորենացու 1-ին փակուղի, 8-րդ շենք, բն. 2ա, AM, N 19275 10.01.2013, N 18470 06.06.2012) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 122-րդ կետի 9-րդ, 10-րդ ենթակետերի, 130-րդ կետի 1-ին ենթակետի, 131-րդ, 132-րդ, 133-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցրած: Համակցված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե առկա է ավելի վաղ առաջնության թվական

ունեցող ապրանքային նշան, որի հիմնական ընկալման բառային տարրը շփոթելու աստիճան նման է հայտարկված նշանի հիմնական ընկալման բառային տարրին: Տվյալ դեպքում նման տարրեր են հանդիսանում համեմատվող ապրանքային նշաններում ներառված «KARAS» և «KARAS(i)» բառային տարրերը, որոնք ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշանների համընկնող մասերի բնույթով և նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով «KARAS(i)» և, չնայած առանձին տարբերությունների, այն է՝ «i» տառի առկայությանը ունեն գրեթե նույն հնչողությունը:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 33-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «KARAS» («Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ, ք. Երևան, Մ. Խորենացու 1-ին փակուղի, 8-րդ շենք, բն. 2ա, AM, N 19275 10.01.2013, N 18470 06.06.2012) համակցված ապրանքային նշաններին: Նաև նշեց, որ նույն հայտատուի «KARASi» բառային տարրը պարունակող մեկ այլ ապրանքային նշանի վերաբերյալ դատարանը կայացրել է վճիռ, համաձայն որի երկու նշանները ճանաչվել են շփոթելու աստիճան նման:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ ազգային շահերից ելնելով հայտարկված ապրանքային նշանը կարելի է գրանցել, նաև նշեց, որ մերժված և հակադրված ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չեն:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը 4 կողմ և 3 դեմ ձայների հարաբերակցությամբ.

## Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «KARASI ARENI NOIR ZORAH» (No20191117) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ